


« ՄԼ ՄԱՅՆԻՆԳ »

Սահմանափակ Պատասխանատվությամբ
Ընկերություն



« ML MINING »

Limited liability
company

N 18

12.06.2019թ.

ՀՀ տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարար
պարոն Ս. Պապիկյանին
ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Է. Գրիգորյանին

Հարգելի պարոնայք


Ի պատասխան ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 12.03.2019թ.-ի N 01ԳԲ/29.4/ԱԱ/1487 գրության տեղեկացնում ենք Ձեզ, որ մեր ընկերության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ կնքել է ՀՀ Արարատի մարզի Շահումյանի ավազի հանքավայրին հարակից տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թիվ Պ-274 ընդերքօգտագործման պայմանագիրը:

Համաձայն պայմանագրի 4.4 կետի 4.4.11 ենթակետի և ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման հիման վրա՝ ընկերությունը պարտավորվել է իրականացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ:

ՀՀ, ք. Երևան, Շիրակի 74/16
Էլ. փոստ: mlmining@mail.ru
Հեռ.՝ +37493 601000, 010 200004

RA Yerevan, 74/16 Shirak str.
e-mail: mlmining@mail.ru
Tel.՝ +37493 601000, 010 200004

093 601000



Աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ ,
2. մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ,
3. ավազի կուտակին հարակից հատվածներում հողերի աղտոտվածության մոնիթորինգ:

Ներկայացնում եմ իրականացված մշտադիտարկումների արդյունքները:

Իրազեկում եմ նաև, որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն ավարտվել են և երկրաբանահետախուզական աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացվել է ընդերքաբանական փորձաքննության:

Հարգանքով՝



Է. Մարգարյան

**ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՍՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Միջին ցուցանիշը	Մշտադիտար- կումների տեսակը	Հաճախականությունը	Արդյունքը ¹
1	2	3	4	5	6
Մակերևութային ջրեր	Երևական տարածք Դիտակետ Ջուր-1 8460915, 4420028 Երևական տարածք Դիտակետ Ջուր-1 8462000, 4418620	Կոշտություն	Նմուշառում, քիմիական վերլուծություն	Հետախուզական հորերի և փորձնական բացահանքի անցման ժամանակ յուրաքանչյուր շաբաթ	3,1մգէկվ/լ
		Կախված մասնիկներ			5,63մգ/լ
		Հոտ			2 բալ
		Գույն			3 աստիճան
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Մթնոլորտային օդ	Երևական տարածք	ածխածնի օքսիդ	Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0,000009մլգ/վրկ
		ազոտի երկօքսիդ			0,0000027մլգ/վրկ
		մուր			0,0014մլգ/վրկ
Հողային ծածկույթ	Երևական տարածք	Նավթամթերք- ներ	Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	2018 թվականի ընթացքում մեկ անգամ	Չի հայտնաբերվել

¹Լաբորատոր վերլուծության արդյունքները վկայում են, որ Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում մթնոլորտ
կատարված արտանետումները չեն գերազանցում նորմատիվային փաստաթղթերով սահմանված չափաբանակները, հողային ծածկույթի աղտոտում
նավթամթերքներով չի արձանագրվել, ջրերի որակական ցուցանիշները համապատասխանում են նորմատիվային փաստաթղթերով սահմանված
չափաբանակների

1	2	3	4	5	6
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Նախատեսված չէ				
Աղմուկ և թրթռում	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Երևակման տարածքում պահեստարաններ չկան				
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց- վածքներ	Երևակման տարածքում նման ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպոր- տային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգումը				